

**Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հանրակրթական
ուսումնական հաստատությունների տնօրենների պաշտոնների թափուր
տեղերը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթներ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ, 4-րդ, 7-րդ կետերի համաձայն՝ հայտարարվում է մրցույթներ՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի**

1. «Պարույր Սևակի հիմնական դպրոց»,
2. «Արբաթի Հովիկ Ջաքարյանի անվան միջնակարգ դպրոց» ,
3. «Լուսառարի միջնակարգ դպրոց»,
4. «Արարատ գյուղի Վ. Սարգսյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ,
5. «Նարեկի միջնակարգ դպրոց»,
6. «Դիպակի միջնակարգ դպրոց»,
7. «Արարատ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոց»,
8. «Սուրենավանի միջնակարգ դպրոց»,
9. «Հնաբերդի միջնակարգ դպրոց»,
10. «Խաչփարի միջնակարգ դպրոց»,
11. «Սիսի միջնակարգ դպրոց»,
12. «Ջանգակապարան միջնակարգ դպրոց»,
13. «Դվինի Լ. Ազգալոյանի անվան միջնակարգ դպրոց»,
14. «Ավշարի միջնակարգ դպրոց»,
15. «Բերդիկի միջնակարգ դպրոց»,
16. «Լուսաշողի միջնակարգ դպրոց»,
17. «Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց» ,
18. «Մասիս քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ-ների տնօրենների պաշտոնների թափուր տեղերը զբաղեցնելու համար

1. Հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
- 2) հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիրը).
- 3) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 21-րդ և 22-րդ մասերով սահմանված հիմքերի բացակայությունը:
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
 - 1) դիմում՝ լիազոր մարմնի ղեկավարի անունով (Ձև N 2).
 - 2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
 - 3) հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը.
 - 4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
 - 5) ինքնակենսագրություն (Ձև N 3):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ բնօրինակները ներկայացնել հարցազրույցի օրը:

Փաստաթղթերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնում (հասցե՝ ք. Արտաշատ Օգոստոսի 23/60, հեռ. 0235.2-11-26) 2024 թվականի սեպտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև ժամը 13.00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Էլեկտրոնային դիմումներն ուղարկել [\(ararat.andznakazm.mrcuyt@mail.ru\)](mailto:ararat.andznakazm.mrcuyt@mail.ru)
Էլեկտրոնային փոստի հասցեին: